ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱԴԱՄՅԱՆ, ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԵՎ ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԿԱՊԻՏԱԼ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՈՐԱԿԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ՍՄՍՀ-ԳՀԾՁԲ-22/9»

ք. Սիսիան «02» 09 2022թ.

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքը, ի դեմս համայնքի ղեկավարի պաշտոնակատար Ա. Հակոբջանյանի, որը գործում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱՍՏԻՃԱՆ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հ. Անդրեասյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Ադամյան, Իսրայելյան և Պարույր Սևակի փողոցների կապիտալ վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում Կատարողը Պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում շինարարական աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի հանգեցրած՝ փաստացի կատարված աշխատանքների արժեքի հիսուն տոկոսին:[17]

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը հպամապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **350 000 (երեք հարյուր հիսուն հազար)** ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

---

[17] *Հանվում է պայմանագրից, եթե մատուցվելիք ծառայությունը չի վերաբերում շինարարական ծրագրերի կատարման համար անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի քաղաքաշինական փորձաքննության իրականացմանը:*

[18] *Եթե Կատարողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

[18.1] *Գանձապետարանում հաշիվներ չունեցող պատվիրատուների դեպքում սույն կետի վերջին պարբերությունը խմբագրվում է հետևյալ բովանդակությամբ. «Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:»*

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում[18.1]:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[21] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

21

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[22]

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված

---

[22] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:[25]

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Սիսիանի համայնք	**«ԱՍՏԻՃԱՆ» ՍՊԸ**
ք. Սիսիան, Սիսական 31	ք. Երևան, Թումանյան 32/1
ՀՀ Ֆին.նախ. գործ. վարչ.	«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 900292101285	Հ/Հ՝ 11500580197801
ՀՎՀՀ 09215978	ՀՎՀՀ՝ 09802201
Համայնքի ղեկավարի	Տնօրեն՝
պաշտոնակատար՝	
Ա. Հակոբջանյան _____	**Հ. Անդրեասյան** _____
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրության չհակասող դրույթներ:

[25] *Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 3-րդ նախադասությունը, իսկ 4-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները» բառերը փոխարինելով «և» բառով: Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:*

Հավելված N 1
«02» 09 2022թ. կնքված
ՍՄՍՀ-ԳՀԾՁԲ-22/9 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հերթական համարը	ընդհանուր գնումների դասակարգիչ (CPV) ծածկագիրը ըստ ԳՄԴԳ՝ ընդգծելով հիմնական միջոցների ներառումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը /ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	71351540	Սիսիան համայնքի Ադամյան, Իսրայելյան և Պարույր Սևակի փողոցների կապիտալ վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ: 1. Տեխնիկական հսկողությունը պետք է իրականացվի պատվիրատուի կողմից տրամադրվող նախագծանախահաշվային փաստաթղթերի հիման վրա և պետք է ապահովի շինարարական աշխատանքների իրականացումը անհրաժեշտ որակով և ինժեներական նախագծերին, տեխնիկական սպեցիֆիկացիաներին և այլ պայմանագրային փաստաթղթերին համապատասխան: 2. Տեխնիկական հսկողության ծառայությունները պետք է իրականացվեն Պատվիրատուի կողմից տրամադրվող պարտականությունների շրջանակներում: 3.Տեխնիկական հսկողության ծառայությունները պետք է իրականացվեն ՀՀ Քաղաքաշինության նախարարի 28.04.1998թ.-ի N44 հրամանով հաստատված շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգով և Պատվիրատուի կողմից տրամադրվող պարտականությունների շրջանակներում: 4. Տեխնիկական հսկողի հիմնական պարտականություններն են՝ տեխնիկական հսկող պետք է ունենա համապատասխան լիցենզիաները շինարարության սկզբից մինչև ավարտը ընկած ժամանակահատվածում պարբերաբար լուսանկարահանել շինարարության օբյեկտի վիճակը և ներկայացնել հաշվետվություն կատարված աշխատանքների վերաբերյալ համաձայն ներկայացվող կատարողական ակտի, ապահովել կատարվող աշխատանքների համապատասխանությունը շինարարական նորմերին և կանոններին, Կապալառուի կողմից պայմանագրային պարտավորությունների կատարման շեղում հայտնաբերելուց անհապաղ տեղեկացնել Պատվիրատուին՝ կցելով համապատասխան հիմնավորումը, ստուգել և հաստատել բանվորական գծագրերը՝ նախապատրաստված Կապալառուի կողմից, ստուգել և վերահսկել նյութերի որակը և շինարարական աշխատանքների ընթացքը, որպեսզի ապահովվի սպեցիֆիկացիաներում և պայմանագրային մյուս փաստաթղթերին համապատասխանությունը: Արգելել կամ փոփոխել այն նյութերը, որոնք չեն համապատասխանում անհրաժեշտ պայմաններին,	դրամ	350000	1	ՀՀ Սյունիքի մարզի, ք. Սիսիան	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև ՍՄՍՀ-ԲՄԱՇՁԲ-22/1 ծածկագրով պայմանագրի կատարման ժամկետի ավարտը

		վերահսկել և գնահատել շինարարական աշխատանքների գործընթացը, որպեսզի ապահովվի շինարարական աշխատանքների ավարտը՝ համաձայն պայմանագրի մեջ նշված ժամանակացույցի, ստուգել բոլոր այն փորձարկումների արդյունքները , որոնք անհրաժեշտ են որակի ապահովման համար: Ստուգել բոլոր հաշվարկները, որոնք անհրաժեշտ են համապատասխան վճարումները իրականացնելու համար, ստուգել բոլոր ծավալային չափերը և հաշվարկները, որոնք անհրաժեշտ են վճարման համար, կատարել որակի և քանակի հսկումը, այն աշխատանքների անհրաժեշտ փորձարկումները, որոնք կատարվում են շինարարական պայմանագրի իրականացման շրջանակում, գտնել շինարարության ժամանակ առաջացող պրոբլեմները և առաջարկել այն գործողությունները, որոնք անհրաժեշտ կլինեն աշխատանքները արագացնելու և աշխատանքային ժամանակացույցը պահպանելու համար, հսկել բոլոր այն հարցերը, որոնք կապված են շինարարական աշխատանքներն անվտանգ իրականացնելու հետ կատարել անհրաժեշտ գրառումներ, որոնք անհրաժեշտ են պայմանագրի ընթացքի վերահսկման համար (ընդգրկելով կատարված աշխատանքների հավաստագրերը և այլ անհրաժեշտ փաստաթղթեր), ստուգել և անհրաժեշտության դեպքում կատարել փոփոխություններ Կապալառուի կողմից նախապատրաստված բանվորական նախագծերի մեջ, կատարել աշխատանքների ծավալների չափագրումներ և մասնակցել կատարողական փաստաթղթերի կազմմանը և հաստատմանը, շինարարության ավարտից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին ներկայացնել Հաշվետվություն կատարված աշխատանքների վերաբերյալ՝ կցելով լուսանկարները, անհրաժեշտ գծագրերը, ծածկված աշխատանքների ակտերը, փորձարկման ակտերը, սերտիֆիկատները: Շինարարության ողջ ընթացքում ապահովել տեխ. հսկիչի մշտական ներկայացումը օբյեկտում Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին:					

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ

ԱԴԱՄՅԱՆ, ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԵՎ ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԿԱՊԻՏԱԼ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

հ/հ	Աշխատանքների և ծախսերի անվանումը	Չափի միավոր	Քանակը
1	2	3	4
	<u>Ադամյան փողոցի կապիտալ վերանորոգում</u>		
	Հողային աշխատանքներ քանդման աշխատանքներ		
1	Ճանապարհի գրունտի մշակում 0,65մ3 տարողությամբ էքսկավատորով, բեռնելով ավտոհինքնաթափ IV կարգ	1000մ3	0.3001
2	Ճանապարհի գրունտի մշակում բուլդոզերով մինչև 50 մ տեղափոխումով	1000մ3	0.0235
3	Եզրաքարերի ապամոնտաժում բետոնե հիմքով և բարձում ավտոհինքնաթափ	100մ	2.21
4	Գրունտի հարթեցում լցակույտում	1000մ3	0.31005
5	Շին աղբի և գրունտի տեղափոխում 7 կմ լցակույտ	տն	558.081
	Ընդամենը		

	Ջրահեռացման Ե/Բ վաքերի և անցումային խողովակների տեղադրում		
1	Ավազային նախապատրաստական շերտ 10սմ	մ3	7.56
2	Հավաքվի Ե/Բետոնե 500*600*3000, 0,53 մ3 վաքերի տեղադրում/ կափարիչով	մ3	22.26
3	Հավաքովի Ե/Բետոնե 500*600*3000, 0,53 մ3/կափարիչով	հատ	42
4	Ե/Բ վաքերի հիդրոմեկուսացում բիտումային մածիկով	100 մ2	2.016
5	Անցումային պողպատե խողովակի տեղադրում d= 273*5,0մմ	գ.մ	53.2
6	Խողովակների հիդրոմեկուսացում բիտումային մածիկով	100 մ2	0.45604
	Ընդամենը		
	Մայթերի կառուցում		
1	Եզրաքարերի հիմքի Խճային նախաշերտի կառուցում 10 սմ հաստությամբ	մ3	12.525
2	Նոր 150*300 Բազալտե եզրաքարերի տեղադրում Բ12,5 դասի բետոնյա հիմքի վրա	100մ	2.735
3	Նոր 100*200 Բազալտե եզրաշարերի տեղադրում Բ12,5 դասի բետոնյա հիմքի վրա	100մ	1.44
4	Մայթի ավազախճային (C-6) խառնուրդով հիմքի կառուցում 10 սմ հաստությամբ	100մ2	4.996
5	Մայթի ծածկի շերտի իրականացում մանրահատիկ Դ տիպի ասֆալտբետոնե խառնուրդից 4 սմ հաստությամբ	100մ2	4.996
	Ընդամենը		
	Վաքերի և խողովակների միացման հանգույցների և գլխամասերի կառուցում		
1	Վաքերի և խողովակների միացման հանգույցների և գլխամասերի կառուցում հիդրոմեկուսիչ f-150,W4, B-15 բետոնով	մ3	0.2
	Ընդամենը		
	Երթևեկելի մասի կառուցում		
1	Խճային հիմքի կառուցում 12 սմ հաստութ.	100մ2	19.563
2	Բիտումի տարածում խճային հիմքի վրա 4,12կգ/ 1քմ	տն	8.05996
3	Ծածկի շերտի իրականացում 5 սմ հաստութ.մանրահատիկ "Բ" տիպի ա/բ խարնուրդից	100մ2	19.563
4	Առկա դիտահորերի թուջե մտոցով ե/բետոնյա հավաքովի կափարիչների ուղղում	հատ	4
	Ընդամենը		
	Իջատեղերի կառուցում		
1	Խճային հիմքի կառուցում 12 սմ հաստութ.	100մ2	6.1395
2	Բիտումի տարածում խճային հիմքի վրա 4,12կգ/ 1քմ	տն	2.52947
3	Ծածկի շերտի իրականացում 5 սմ հաստութ.մանրահատիկ "Բ" տիպի ա/բ խարնուրդից	100մ2	6.1395
	Ընդամենը		
	Իսրայելյան փողոցի կապիտալ վերանորոգում		
	Հողային աշխատանքներ քանդման աշխատանքներ		
1	Ճանապարհի գրունտի մշակում 0,65մ3 տարողությամբ էքսկավատորով, բեռնելով ավտոհինքնաթափ IV կարգ/ ներառյալ կողային առվի կառուցում 0,6 մ խորությամբ	1000մ3	3.6077
2	Ճանապարհի գրունտի մշակում բուլդոզերով մինչև 50 մ տեղափոխումով	1000մ3	0.0205
3	Եզրաքարերի ապամոնտաժում բետոնե հիմքով և բարձում ավտոհինքնաթափ	100մ	12.11
4	Գրունտի հարթեցում լցակույտում	1000մ3	3.66067
5	Շին աղբի և գրունտի տեղափոխում 7 կմ լցակույտ	տն	6589.2
	Ընդամենը		

	Ջրահեռացման Ե/Բ վաքերի և անցումային խողովակների տեղադրում		
1	Ավազային նախապատրաստական շերտ 10սմ	մ3	37.38
2	Հավաքովի Ե/Բետոնե 500*600*3000, 0,53 մ3 վաքերի տեղադրում/ կափարիչով	մ3	110.24
3	Հավաքովի Ե/Բետոնե 500*600*3000, 0,53 մ3/կափարիչով	հատ	208
4	Ե/Բ վաքերի հիդրոմեկուսացում բիտումային մածիկով	100 մ2	9.968
5	Անցումային պողպատե խողովակի տեղադրում d= 273*5,0մմ	գ.մ	180.1
6	Խողովակների հիդրոմեկուսացում բիտումային մածիկով	100 մ2	1.54385
	Ընդամենը		
	Մայթերի կառուցում		
1	Եզրաքարերի հիմքի Խճային նախաշերտի կառուցում 10 սմ հաստությամբ	մ3	71.844
2	Նոր 150*300 Բազալտե եզրաքարերի տեղադրում Բ12,5 դասի բետոնյա հիմքի վրա	100մ	17.548
3	Նոր 100*200 Բազալտե եզրաշարերի տեղադրում Բ12,5 դասի բետոնյա հիմքի վրա	100մ	6.4
4	Մայթի ավազախճային (C-6) խառնուրդով հիմքի կառուցում 10 սմ հաստությամբ	100մ2	33.26
5	Մայթի ծածկի շերտի իրականացում մանրահատիկ Դ տիպի ասֆալտբետոնե խառնուրդից 4 սմ հաստությամբ	100մ2	33.26
6	խամքարաբետոնից հենապատերի նորոգում	մ3	10.8
	Ընդամենը		
	Անցումային d=530*6 խողովակների տեղադրում		
1	Անցումային պողպատե խողովակների ապամոնտաժում և հանձնում պատվիրատուին	100գմ	0.36
2	Անցումային պողպատե խողովակի տեղադրում d= 530*6,0մմ	գ.մ	104
3	Խողովակների հիդրոմեկուսացում բիտումային մածիկով	100 մ2	1.73077
	Ընդամենը		
	Վաքերի և խողովակների միացման հանգույցների և գլխամասերի կառուցում		
1	Վաքերի և խողովակների միացման հանգույցների և գլխամասերի կառուցում հիդրոմեկուսիչ f-150,W4, B-15 բետոնով	մ3	3.54
	Ընդամենը		
	Երթևեկելի մասի կառուցում		
1	Խճավազային հիմքի կառուցում 15 սմ հաստութ. C-5 խառնուրդով	100մ2	164.822
2	Ծածկի շերտի իրականացում 6 սմ հաստութ.խոշորահատիկ "Բ" տիպի ա/բ խարնուրդից	100մ2	164.822
3	Ծածկի շերտի իրականացում 4 սմ հաստութ. մանրահատիկ "Բ" տիպի ա/բ խարնուրդից	100մ2	164.82
4	Առկա դիտահորերի թուջե մտոցով ե/բետոնյա հավաքովի կափարիչների ուղղում	հատ	3
5	Դիտահորի թուջե կափարիչ՝ մտոց	լրակազմ	2
	Ընդամենը		
2	**Իջատեղերի կառուցում**		
1	Խճավազային հիմքի կառուցում 15 սմ հաստութ. C-5 խառնուրդով	100մ2	9.5973
2	Ծածկի շերտի իրականացում 6 սմ հաստութ.խոշորահատիկ "Բ" տիպի ա/բ խարնուրդից	100մ2	9.5973
3	Ծածկի շերտի իրականացում 4 սմ հաստութ. մանրահատիկ "Բ" տիպի ա/բ խարնուրդից	100մ2	9.5973
	Ընդամենը		
	Պարույր Սևակի փողոցի կապիտալ վերանորոգում		
	Հողային աշխատանքներ քանդման աշխատանքներ		
1	Ճանապարհի գրունտի մշակում 0,65մ3 տարողությամբ էքսկավատորով, բեռնելով ավտոինքնաթափ IV կարգ	1000մ3	0.6675
2	Ճանապարհի գրունտի մշակում բուլդոզերով մինչև 50 մ տեղափոխումով	1000մ3	0.03

3	Եզրաքարերի ապամոնտաժում բետոնե հիմքով և բարձում ավտոհինքնաթափ	100մ	9.435
4	Գրունտի հարթեցում լցակույտում	1000մ3	0.70995
5	Շին աղբի և գրունտի տեղափոխում 7 կմ լցակույտ	տն	1277.91
	Ընդամենը		
	Ջրահեռացման Ե/Բ վաքերի և անցումային խողովակների տեղադրում		
1	Ավազային նախապատրաստական շերտ 10սմ	մ3	23.34
2	Հավաքովի Ե/Բետոնե 500*600*3000, 0,53 մ3 վաքերի տեղադրում/ կափարիչով	մ3	68.90
3	Հավաքովի Ե/Բետոնե 500*600*3000, 0,53 մ3/կափարիչով	հատ	130.00
4	Ե/Բ վաքերի հիդրոմեկուսացում բիտումային մածիկով	100 մ2	6.22
5	Անցումային պողպատե խողովակի տեղադրում d= 273*5,0մմ	գ.մ	163.50
6	Խողովակների հիդրոմեկուսացում բիտումային մածիկով	100 մ2	1.40
	Ընդամենը		
	Մայթերի կառուցում		
1	Եզրաքարերի հիմքի խճային նախաշերտի կառուցում 10 սմ հաստությամբ	մ3	51.49
2	Նոր 150*300 Բազալտե եզրաքարերի տեղադրում Բ12,5 դասի բետոնյա հիմքի վրա	100մ	8.18
3	Նոր 100*200 Բազալտե եզրաշարերի տեղադրում Բ12,5 դասի բետոնյա հիմքի վրա	100մ	8.985
4	Մայթի ավազախճային (C-6) խառնուրդով հիմքի կառուցում 10 սմ հաստությամբ	100մ2	20.19
5	Մայթի ծածկի շերտի իրականացում մանրահատիկ Դ տիպի ասֆալտբետոնե խառնուրդից 4 սմ հաստությամբ	100մ2	20.19
6	Խամքարաբետոնից հենապատերի կառուցում	մ3	9.52
	Ընդամենը		
	Վաքերի և խողովակների միացման հանգույցների և գլխամասերի կառուցում		
1	Վաքերի և խողովակների միացման հանգույցների և գլխամասերի կառուցում հիդրոմեկուսիչ f-150,W4, B-15 բետոնով	մ3	0.68
	Ընդամենը		
	Երթևեկելի մասի կառուցում		
1	Խճային հիմքի կառուցում 12 սմ հաստութ.	100մ2	39.27
2	Բիտումի տարածում խճային հիմքի վրա 4,12կգ/ 1քմ	տն	16.18
3	Ծածկի շերտի իրականացում 5 սմ հաստութ.մանրահատիկ "Բ" տիպի ա/բ խարնուրդից	100մ2	39.268
4	Առկա դիտահորերի թուջե մտոցով ե/բետոնյա հավաքովի կափարիչների ուղղում	հատ	5
	Ընդամենը		
	Իջատեղերի կառուցում		
1	Խճային հիմքի կառուցում 12 սմ հաստութ.	100մ2	22.4909
2	Բիտումի տարածում խճային հիմքի վրա 4,12կգ/ 1քմ	տն	9.27
3	Ծածկի շերտի իրականացում 5 սմ հաստութ.մանրահատիկ "Բ" տիպի ա/բ խարնուրդից	100մ2	22.4909

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Սիսիանի համայնք
ք. Սիսիան, Սիսական 31
ՀՀ Ֆին.նախ. գործ. վարչ.
Հ/Հ 900292101285
ՀՎՀՀ 09215978
Համայնքի ղեկավարի
պաշտոնակատար

Ա. Հակոբջանյան _____
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«ԱՍՏԻՃԱՆ» ՍՊԸ
ք. Երևան, Թումանյան 32/1
«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ՝ 11500580197801
ՀՎՀՀ՝ 09802201
Տնօրեն՝

Հ. Անդրեասյան _____
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 2
«02» 09 2022թ. կնքված
ՍՄՍՀ-ԳՀԾՁԲ-22/9 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71351540	*Ադամյան, Իսրայելյան և Պարույր Սևակի փողոցների կապիտալ վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ*	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Սիսիանի համայնք
ք. Սիսիան, Սիսական 31
ՀՀ Ֆին.նախ. գործ. վարչ.
Հ/Հ 900292101285
ՀՎՀՀ 09215978
Համայնքի ղեկավարի
պաշտոնակատար՝

Ա. Հակոբջանյան _____
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«ԱՍՏԻՃԱՆ» ՍՊԸ
ք. Երևան, Թումանյան 32/1
«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ՝ 11500580197801
ՀՎՀՀ՝ 09802201
Տնօրեն՝

Հ. Անդրեասյան _____
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 3
«02» 09 2022թ. կնքված
ՍՄՍՀ-ԳՀԾՁԲ-22/9 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«02» 09 2022թ. կնքված
ՍՄՍՀ-ԳՀԾՁԲ-22/9 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն